ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Գոյականի ուսուցման մեթոդիկա

Ուսուցիչ՝ Մելանյա Պողոսյան

Խումբ՝ Հայոց լեզու և գրականություն

Խմբի ղեկավար՝ Լիլիթ Մարկոսյան

2022թ.

Եղեգնաձոր

Ներածություն

Մեթոդը հունարեն methodos բառից է,որ սկզբնապես նշանակել է դեպի որևէ նպատակ տանող ուղի,իսկ հետագայում իմաստափոխվելով գործածվել է իբրև բնության և հասարակական կյանքի երևույթների հետազոտման,ինչպես նաև գիտելիքների ուսուցման եղանակ։Այժմ էլ մեթոդ է համարվում թե՛ հետազոտության եղանակը, որով կատարվում են հայտնագործումներ,և թե՛ ուսուցման եղանակը,որով արդեն ձևակերպված գիտելիքները ուսուցանվում են դպրոցում։Վերջինիս հիման վրա էլ ձևավորվել է մեթոդիկան։

Մեթոդիկան,իբրև մանկավարժական գիտություն, ունի իր ուսումնասիրության առարկան։

Մեթոդիկան լեզվի ուսուցման տեսությունն է. այն զինում է ուսուցչին,բարձրացնում նրա տեսական-մեթոդական մակարդակը,զարգացնում ստեղծագործական վերաբերմունք մայրենի լեզվի ուսուցման նկատմամբ։

Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան ունի իր խնդիրները. 1/ որոշում է միջնակարգ դպրոցում լեզվի դասընթացի բովանդակությունն ու ծավալը,առանձնահատկություններն ու նպատակները, նրա կառուցվածքը,ուսումնական նյութի բաշխումն ըստ դասարանների,2/կատարում է արդյունավետ մեթոդների ընտրություն և նկարագրություն՝ հաշվի առնելով ուժերի ու ժամանակի տնտեսումը, 3/ուսումնասիրում է այն պայմանները,որոնցում աշակերտները գիտելիքներ են ձեռք բերում։

Հայոց լեզվի մեթոդիկան մանկավարժական գիտություն է,ուստի ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը բխում է նաև դիդակտիկայի սկզբունքներից, մանկավարժության դրույթներից։

Այժմ կփորձեմ ներկայացնել գոյականի ուսուցուման մեթոդիկան։

Գոյականի ուսուցման մեթոդիկա

Գտենք, որ աշակերտները գոյականին ծանոթ են դեռևս տարրական դասարանից,այդ իսկ պատճառով դասը կարելի է սկսել զրույց մեթոդով:

Դասը կունենա մոտավորապես այսպիսի ընթացք:Կհանձնարարվի,որ աշակերտները նայեն իրենց շուրջը և թվեն իրենց շրջապատում եղած առարկաների անունները:Աշակերտները կթվարկեն՝նստարան,աթոռ, գրատախտակ, նկար, պատուհան, առաստաղ, պատ, հատակ,գիրք, գրիչ և այլն:Աշակերտներն ուսուցչի օգնությամբ կձևակերպեն գոյականի սահմանումը:Առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուն:Այնուհետև կպարզենք,թե առարկա ասելով ի՞նչ ենք հասկանում:

Աշակերտները կասեն,որ առարկա ասելով հասկանում են **իրեր՝** սեղան, աթոռ, գիրք, գրատախտակ և այլն, ինչպես նաև **անձ՝** ուսուցիչ, աշակերտ,բանվոր, բժիշկ,նկարիչ և այլն:Աշակերտներին լսելուց հետո ես կշարունակեմ՝ բացատրելով, որ առարկա ասելով պետք է հասկանալ նաև զանազան **բնական և հասարակական** երևույթներ՝ դաս, քամի, համերգ, անձրև, փոթորիկ, ժողով, գիշեր,**հասկացություններ՝** սեր, վախ, քաջություն, հոգս,ցավ և այլն:Այդ բառերը կգրեմ գրատախտակին:Կրկին հարց կուղղեմ աշակերտներին, պետք է առանձնացնեն այն բառերը,որոնք կարելի է աչքով տեսնել,ձեռքով շոշոփել:Աշակերտները կպատասխանեն,որ տեսնել և շոշափել կարելի է անձերը,իրերը, իսկ երևույթներն ու հասկացություններըհնարավոր չէ շոշափել, բռնել,դրանք մենք մտքով ենքզգում կամ հասկանում:Լսելուց հետո ես կմիջամտեմ՝ ասելով,որ առաջին երկու խումբը կոչվում է **թանձրացական գոյականներ,**իսկ վերջին երկու խումբը՝ **վերացական:**Մեկ անգամ ևս կբացատրեմ,որ թանձրացական գոյականները նյութական իմաստ ունեն,այսինքն կարող ենք զգալ զգայարաններով՝ շոշոփել, տեսնել, լսել, հոտոտել, ճաշակել, իսկ վերացական գոյականները զգայարաններով չենք կարող զգալ, ըմբռնում ենք մտքով:Կպարզենք նաև, որ գրված և թվարկված բոլոր բառերը պատասխանում են **ի՞նչ** և **ո՞վ** հարցերին. ուրեմն կարող ենք ամրագրել,որ գոյականը պատասխանում է վերը նշված հարցերին:Այս զրույցից հետո աշակերտները կկարդան դասը, կկատարեն նախատեսված վարժությունները և կհանձնարարվի տնային աշխատանք:

Հաջորդ նյութն է «Հատուկ և հասարակ գոյականներ»: Այս դեպքում աշակերտներին պետք է հասկացնել,որ հասարակ անունը տեսակի անունն է,իսկ հատուկը՝ այդ տեսակի առարկաներից որևէ մեկի: Օրինակ՝ **աշակերտը** տեսակի անունն է, իսկ **Արամը** այդ տեսակից մեկի անունը, **գետը** տեսակի անուն է, իսկ **Արաքսը** այդ տեսակից մեկի անունը,**քաղաքը** տեսակի անուն է,իսկ **Երևանը** այդ տեսակից մեկի անունը:Այսպիսով,**առարկայի նույն տեսակին տրվող ընդհանրական անունը հասարակ անուն է, այդ անունը կրող բառերը կոչվում են հասարակ գոյականներ,** օրինակ՝ աշակերտ, քաղաք, գետ, լեռ,ուսուցիչ,բժիշկ,խոհարար,ձի,շուն և այլն:Խոսքն ավելի հասկանալի ու կանոնակակարգված դարձնելու համար հարկ եղավ նույն տեսակի պատկանող ամենմի առարկայի տալ առանձին անուն. այդ անունն էլ կոչվեց **հատուկ անուն**:

Ավելի լավ հասկանալու և ընկալելու համար գրատախտակին կգրենք առարկաների անունների երկու շարք՝ հասարակ և սրան համապատասխան հատուկ անուններ։ Այսպես՝

Մարդ	**Բնակավայր**	**Գետ**	**Ծով,լիճ**	**Կենդանի**
Անահիտ	Երևան	Արփա	Սևանա	Բողար
Կարեն	Արարատ	Աղստև	Վանա	Չալո
Աշոտ	Ջերմուկ	Որոտան	Կասպից	Բոբի
Անի	Գնդեվազ	Մեծամոր	Սև	Շալանկ
Արամ	Գյումրի	Հրազդան	Ուրմիա	Ծաղիկ

Այնուհետև կնշենք, որ հատուկ անունները ոչ միայն մեկ բառով են գրվում,
այլև մի քանի,այսինքն՝ լինում են **բաղադրյալ**։Հանձնարարվում է տեղերում զույգերով լրացնել նախապես գծված աղյուսակը։

Խմբերի անվանումները	**Օրինակներ**
Բաղադրյալ անձնանուններ,գրական ծածկանուններ	Հովհաննես Թումանյան,Աշոտ Երկաթ,Դանիել Վարուժան
Աշխարհագրական վայրերի անվանումներ	Դոնի Ռոստով, Նյու Յորք,Հայկական Պար
Պետությունների պաշտոնական անվանումներ	Հայաստանի Հանրապետություն,Ռուսաստանի Դաշնություն
Պատմամշակութային տեղանունների անվանումներ	Երևանի Սուրբ Սարգիս,Մաստարայի Սուրբ Հովհաննես
Համաստեղություններ	Մեծ Արջ,Փոքր Արջ

Ինչպես օրինակներից կարող ենք տեսնել,մի շարք հատուկ անուններ կազմված են մի քանի բառերից /բաղադրիչներից/։Դրանք կոչվում են **բաղադրյալ հատուկ անուններ։**

Բաղադրյալ հատուկ անուններն ունեն իրենց գրության ձևը։Արդեն իսկ տետրերում գրված օրինակներով վեր ենք հիշում այն բաղադրյալ հատուկ անունների գրությունը, որոնց բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով և ամրապնդում ենք։

Այնուհետև բացատրվում է, որ կան բաղադրյալ հատուկ անուններ,որոնց միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով՝կրկին աղյուսակով ներկայացնելով, քանի որ այդպես ավելի լավ է տպավորվում հաղորդածը։

Հ/հ	Խմբերի անվանումները	Օրինակներ
1.	Աշխարհագրական անվանումներ,որոնց մեջ լրացյալն առանձին վերցրած հատուկ անուն չէ	Սև ծով,Սևանա լիճ, Արփա գետ,Բալկանյան թերակղզի
2.	Չակերտների մեջ գրվող անվանումները	«Հին օրենություն»,«Գրական

		թերթ»
3.	Օտար անուններ,որոնք մեջտեղում ունեն *դա,դե,վան,ալ,դը* մասնիկները	Օնորե դը Բալզակ,Գի դը Մոպասան
4.	Հիմնարկների,կուսակցությունների,պատմամշակութայի ն տեղանունների անվանումներ	Կրթության ազգային ինստիտուտ,Ամբերդ ամրոց,
5.	Մրցանակների,կոչումների,շքանշանների անվանումներ	Նոբելյան մրցանակ,Ազգային հերոսի կոչում
6.	Մարդկանց կողմից ստեղծված իրավական կառույցների,պետական տարբեր մարմինների անվանումներ	Երևանի պետական համալսարան,Ազգայի ն ժողով,Համայնքների պալատ
7.	Նշանավոր իրադարձությունների և պետական տոների անվանումներ	Նոր տարի,Մեծ եղեռն,Անկախության օր

Ուշադրություն է հրավիրվում այն բացառության վրա, որ ***նահապետ*** բառը մեծատառով է գրվում միայն ***Հայկ Նահապետ*** բաղադրյալ հատուկ անվան մեջ,մյուս դեպքերում գրվում է փոքրատառով,օրինակ՝ ***Նոյ նահապետ***:

Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության ստորին պալատը կոչվում է ***Համայնքների պալատ*** ,ինչպես մեր Ազգային ժողովը,ուստի առաջին բաղադրիչը գրվում է մեծատառով,քանի որ մարդկանց կողմից ստեղծված իրավական կառույց է,պետական կառավարման մարմին,սակայն երբ գործածվի սովորական իմաստով,ասենք՝ Բոլոր համայնքների մշակույթի պալատները վերանորոգվեցին: նախադասության մեջ ***համայնքների պալատները*** իրավական,պետական կառավարման մարմիններ չեն,ուստի գրվում են փոքրատառով:

Բաղադրյալ հատուկ անունների ուղղագրության ուսուցումը ամրապնդելու նպատակով կտրվի նաև ուսուցողական թելադրություն:

«Անձնանիշ և իրանիշ գոյականներ»: Թեմայի ուսուցումը կարելի է սկսել այսպես.

Քահանա	Գիրք
Նկարիչ	Պայուսակ
Վարպետ	Դասասենյակ
Բանվոր	Դիմակ
Ուսուցիչ	Թմբուկ
Աշակերտ	Մուրճ
Դերձակ	Կավիճ
Հյուսն	Մատիտ

Այնուհետև կհանձնարարվի աշակերտներին գտնել այն ընդհանրությունները, ըստ որոնց դասակարգվել են բառերը:

Չկողմնորոշվելու դեպքում առաջարկվում է հարց տալ գրված բառերին և ըստ հարցի էլ հմնավորել դասակարգումը։Ուրեմն **ո՞վ** հարցին պատասխանող բառերը կոչվում են **անձնանիշ**, իսկ ի՞նչ հարցին պատասխանողները՝ **իրանիշ**։
Այնուհետև կբացատրվի ***անձ*** բառը այլ ձևակերպումներով։Երեխաները ինչ գիտեն կասեն և մնացածը կլրացնի ուսուցիչը և կստացվեն հետևյալ տարբերակները՝
ա/անձի համար՝մարդ,խոսելու ընդունակ
բ/իրի համար՝ առարկա, իր, խոսել չկարողացող
Աշակերտների ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքին,որ կենդանիներին և թռչուններին տրվում է **ի՞նչ** հարցը,այստեղ նաև միջառարկայական կապ է ստեղծվում ռուսաց լեզվի հետ, քանի որ իրենք արդեն գիտեն, որ ռուսերենում կենդանիներին և թռչուններին տրվում է **ո՞վ** հարցը։
Ամրապնդելու նպատակով կտրվի մի հետաքրքիր խմբային աշխատանք։Յուրաքանչ-յուր խմբի կտրվի մի գեղարվեստական գիրք և կառաջարկվի դուրս գրել 20-ական անձնանիշ և իրանիշ գոյականներ և փոխանցել մյուս խմբին՝ կատարելու։Յուրաքանչ-յուր խումբ աշխատում է այնպիսի բառեր դուրս գրել,որ մյուս խումբը դժվարանա աշխատել,ուստի և չկողմնորոշվի իրանի՞շ է, թե՞ անձնանիշ։
Հաջորդը կարելի է աշակերտներին ցույց տալ առարկաների և մասնագիտություն-ներ նկարներ և հանձնարարել աշակերտներին անվանել դրանք։

Անվանելուց հետո առանձնացնում են անձնանիշ և իրանիշ գոյականները։

«Գոյականի թիվը» Նորից կարելի է դասը վարել զրույց մեթոդով՝ նկատի ունենալով,որ աշակերտներին ծանոթ հարց է։Գրատախտակին կգրենք գոյականների երկու շարք՝ միավանկ և բազմավանկ և կհանձնարարվի կազմել դրանց հոգնակի ձևերը և ընդգծել վերջավորությունները։

Այսպես՝

հող-հողեր	սեղան-սեղաններ
փայտ-փայտեր	նստարան-նստարաններ
պատ-պատեր	սենյակ-սենյակներ
ձայն-ձայներ	փողոց-փողոցներ
տուն-տներ	նկար-նկարներ

ապա կպահանջվի,որ աշակերտները նայեն շարքերին և որոշեն,թե քանի վանկից են բաղկացած առաջին և երկրորդ շարքի գոյականները։Ուստի, ո՞ր գոյականներն են ***–եր*** վերջավորությունն ստանում,որոնք՝ -***ներ***։Այնուհետև կպահանջվի,որ աշակերտները սահմանեն հոգնակիի կազմությունը։ Կավելացնենք,որ հոգնակի թիվ ստանալու համար գործածում ենք ոչ միայն ***–եր*** և ***-ներ,*** այլև ***-այք,-իկ,-ք*** վերջավորությունները։

Եվ հոգնակիի կազմության ձևերը ներկայացնում ենք գծապատկերներով։


-ԵՐ
Միավանկ բառեր
ծառ-ծառեր
տուն-տներ
գիրք-գրքեր
Երկրորդ վանկում գաղտնավանկի ը ունեցող բառեր
աստ/ը/ ղ-աստղեր
արկ/ը/ղ- արկղեր
կայս/ը/ր-կայսրեր
Այն բարդ գոյականները,որոնց երկրորդ արմատը միավանկ գոյական է
չվերթ-չվերթեր
բառագիրք-բառագրքեր
շարասյուն-շարասյուներ
-ՆԵՐ
Բազմավանկ բառեր
ընտանիք-ընտանիքներ
դասարան-դասարաններ
Գրաբարում –ն վերջնահնչյուն ունեցող բառեր
գառ/ն/-գառներ
հարս/ն/-հարսներ
ՇՏ,ՍՊ,ՉԳ,ՍԿ տառակապ. սկսվող բառեր
սկիզբ-սկիզբներ
շտաբ-շտաբներ
Այն բարդ գոյականները որոնց վերջին արմատը միավանկ բայարմատ է
ժամացույց-ժամացույցներ
հանքափոր-հանքափորներ

Հոգնակի կազմության այլ ձևեր



Հոգնակի թվի կազմությունը մանրամասնորեն բացատրելուց հետո կարող ենք կազմակերպել խմբային և անհատական աշխատանքներ՝ նոր նյութը ամրապնդելու նպատակով:

Գոյականի թվից հետո ուսուցանվում է նրա **հոլովումը:** Գոյականի հոլովումը բացատրելու համար գրականության դասագրքից կարելի է ընտրել գոյականի տարբեր հոլովաձևեր ունեցող նախադասություններ:

Օրինակ՝

Անտառում խորին խորհուրդներ կային
Եվ արձագանքներ կային ***անտառում***,
Օրոր էր ասում աշունն ***անտառին***,
Սակայն ***անտառի*** քունը չէր տանում:

Աշակերտները կկարդան այս քառատողը և կհանձնարարվի ընդգծել ***անտառ*** գոյականի կիրառությունները՝ **անտառում,անտառին, անտառի:**Ընդգծված բառերը կգրենք գրատախտակին և աշակերտներին կբացատրվի,որ մեզ շրջապատող առարկաները կարող են տարբեր ձևեր ընդունել,օրինակ՝ փայտը կարող է շրջանի, ուղղանկյան,քառակուսու տեսք ընդունել,կարող է հաստ կամ բարակ լինել,բայց միևնույնն է,այդ ձևափոխություններընյութի տեսակը չեն փոխում:Այդպես էլ բառերը,ըստ անհրաժեշտության կարող են տարբեր ձևերով հանդես գալ,բայց դրանից բառն իր իմաստը չի փոխում,որը մենք տեսանք անտառ բառում:Եվ այդ փոփոխություններից,ձևերից յուրաքանչյուրը կոչվում է **հոլով**,իսկ բոլոր ձևափոխություններն իրար հետ՝ **հոլովում**:

Որպեսզի դասը հետաքրքիր լինի,աշակերտը չձանձրանա այն սովորելուց և պարզապես զբաղվի մտավարժանքով,գրատախտակին կգրենք հարցեր և կհանձնարարենք աշակերտները պատասխանեն դրանց։Յուրաքանչյուրի պատասխանը պիտի պահպանի հոլովների հերթականությունը։ Օրինակ՝

1. Ի՞չը (ինչե՞ր) է (են) պահվում Մատենադարանում։ **գիրք (գրքեր)-ուղղական հոլով**

2.Ինչի՞ (ինչերի՞) էջերով մենք կարող ենք ճամփորդել։ **գրքի (գրքերի)-սեռական հոլով**

3.Ինչի՞ն (ինչերի՞ն) չի կարելի արհամարհանքով վերաբերվել։ **գրքին (գրքերին)-տրական հոլով**

4.Որպեսզի գրադարանները հարուստ լինեն,ի՞նչ (ինչե՞ր) պիտի նվիրենք։ **գիրք (գրքեր)- հայց. հոլ.**

5.Ինչի՞ց (ինչերի՞ց) ենք շատ բան սովորում։ **գրքից (գրքերից)-բացառական հոլով**

6. Ինչո՞վ (ինչերո՞վ) է հնարավոր մի քանի ժամում աշխարհով մեկ շրջել։ **գրքով (գրքերով)-գործ. հոլ.**

7.Որտե՞ղ են ապրում բառերի զգեստ հագած գեղեցիկ և իմաստուն մտքերը։ **գրքում (գրքերում) ներգոյական հոլով**

Աշակերտները տեսնում են,որ **գիրք** բառը տարբեր հարցերի պատասխանելիս տարբեր ձևեր է ընդունում. ահա այդ տարբեր ձևերից յուրաքանչյուրը կոչվում է հոլով և ունի իր առանձնահատկությունները։Ամրապնդելու նպատակով աշակերտներին կտրվի նոր առաջադրանք մի քիչ ավելի բարդացված և պատասխանները կգտնեն իրենք ու կհիմնավորեն։Աշխատանքը կարվի խմբերով և յուրաքանչյուր խումբ կներկայացնի իր աշխատանքը։

Այս աշխատանքից հետո անցնում ենք հոլովների առանձին-առանձին ուսուցմանը։Արդեն աշակերտները տեղեկանում են,որ **ուղղական հոլովը** բառի ուղիղ ձևն է։ Ուղղական հոլովով դրվում են՝

ա/Նախադասության ենթական-**Օրը** պայծառ էր ու գեղեցիկ։

բ/ Գոյականական անդամի լրացումները- Իմ ընկերը՝ **Արամը**, շատ խելացի և բարեկիրթ տղա է։

Վարպետ Մարգարն էր կառուցել այս տունը։

գ/ Ստորոգելի մաս կազմող գոյականները-Լեռների գրկում ծվարածը մեր **գյուղնն է**։

դ/ Կոչականը-**Երեխանե՛ր**, օգնեք տատիկին։

Ուղղական հոլովով դրված գոյականները պատասխանում են **ո՞վ-ովքե՞ր,ի՞նչ-ինչե՞ր** հարցերին։

Սեռական հոլովը ցույց է տալիս այն առարկան,որին պատկանում է մի ուրիշ առարկա։Սեռական հոլովի բնութագրիչներն են.

ա/պատասխանում է՝ անձնանիշ գոյականների դեպքում **ո՞ւմ** հարցին,իսկ իրանիշ գոյականների դեպքում **ինչի՞ /ինչերի՞/** հարցերին,

բ/նախադասության մեջ առանց կապերի գործածվելիս լինում է միայն գոյականական անդամի լրացում- **արևի** /ինչի՞/ ճառագայթները, **եղբոր** /ո՞ւմ/ ընկերը

գ/կապերի հետ գործածվելիս լինում է նախադասության մեկ անդամ,բայական անդամի լրացում- սեղանի վրա,հանուն հայրենիքի, նապաստակի պես

դ/ հոդ չի ստանում

Այնուհետև աշակերտների ուշադրությունը կհրավիրենք այն իրողության վրա,որ մի դեպքում **արևի** /ձևում/ բառին վերջավորություն է ավելացել,իսկ մյուս դեպքում **եղբոր** /ձևում/ բառի ներսում է կատարվել փոփոխություն **ա**յ երկհնչյունը փոխարինվել է **ո** տառով։Եվ կնշենք,որ այդ վերջավորությունները կոչվում են հոլովիչներ,որոնք լինում են վերջավոր կամ արտաքին- **ի,ու,ան,վա,ոջ,ց** և անվերջավոր կամ ներքին **ա,ո:**

Գրատախտակին կգրենք յուրաքանչյուր հոլովումից մեկական օրինակն կողքին՝ սեռականի հարցը,աշակերտները կպատասխանեն և կգրեն հարցի կողքին։

պատուհան-ինչի՞-պատուհան**ի**	հայր-ո՞ւմ-հ**ո**ր
օր-ինչի՞-օր**վա**	եղբայր-ո՞ւմ-եղբ**ո**ր

գարուն-ինչի՞-գարն**ան** տուն-ինչի՞-տ**ա**ն
գարի-ինչի՞-գար**ու** արյուն-ինչի՞-արյ**ա**ն
քույր-ո՞ւմ-քր**ոջ**
Արամենք-ո՞ւմ-Արամեն**ց**

Պետք է նաև աշակերտներին բացատրել,որ բացի այս հոլովաձևերիցկան նաև տրված ձևերից շեղվողտարբերակներ,դրանք կոչվում են այլաձև հոլովումներ։Դրանց են պատկանում մի քանի բառեր՝

Աղջիկ-աղջկ**ա**,կայսր-կայսր**ի**,կայս**եր**
Սեր-սիր**ո**,դուստր-դուստր**ի**,դուստ**եր**
Հույս-հույս**ի**,հուս**ո**,գալուստ-գալստ**ի**,գալստ**յան**
Աստված-Աստծ**ու**,Աստծ**ո**,ծնունդ-ծնն**դի**,ծնն**դյան** և այլն։

Անցնելով **տրական հոլովի** ուսուցմանը՝ բացատրում ենք նրա գործառությունը՝ այն,որ տրականով գոյականը լինում է միայն բայական անդամի լրացում և ստանում է հոդ։Տրական հոլովը հենց սրանով էլ տարբերվում է սեռական հոլովից։Դասը ամրապնդման նպատակով դասարանում կվերլուծենք Իսահակյանի «Ռավեննայում» բանաստեղծությունը,կգտնենք ուղղական,սեռական,տրական հոլովներով դրված բառերը։Այս դասաժամին կօգտվենք էլեկտրոնային գրատախտակից,կկատարենք նախապես պատրաստած աշխատանքները։

Հաջերդ թեման **հայցական հոլովն** է,որը ներգործական սեռի խնդիրն է։Պետք է բացատրենք,որ հայցական հոլովը մեկ նման է ուղղականին,մել էլ՝ տրականին։Օրինակ՝ Հնձվորը հնձում է արտը։Այս նախադասության մեջ **հնձվորը** և **արտը** բառերը նույն ձևն ունեն,պատասխանում են ուղղական հոլովի հարցերին,հանդես են եկել հոդով։Սակայն մեկը դրված է ուղղական հոլովով,մյուսը՝ հայցական։Այն բառը,որը գործողություն կատարողն է,այսինքն՝ ենթական,դրված է ուղղական հոլովով,իսկ այն բառը,որն իր վրա է վերցնում ենթակայի կատարած գործողությունը,դրված է հայցական հոլովով։Ուրեմն իրանիշ գոյականների ուղղական և հայցական հոլովներն իրարից տարբերելու համար պետք է գտնել նախադասության ենթական։Հայցական հոլովը կատարում է լրացման պաշտոն։

Անձնանիշ գոյականների դեպքում հայցականը նման է տրական հոլովին և պատասխանում է տրական հոլովի հարցին՝ **ո՞ւմ։**

Օրինակ՝ Անահիտը սիրում է **մայրիկին։**
Անահիտը հանդիպեց **մայրիկին։**

Մայրիկին բառը մի դեպքում դրված է տրական հոլովով,մյուս դեպքում՝ հայցական,բայց երկուսն էլ ունեն նույն ձևը և պատասխանում են նույն հարցին։Տրբերակելու համարպետք է սովորեցնել երկու հայտնի եղանակները։

Մյուս հոլովների յուրացումը դժվար չէ,քանի որ նրանքունեն իրենց կայուն վերջավորությունը։

Բացառական հոլովը կազմվում է **ից** կամ **ուց** վերջավորությամբ, նրանով արտահայտվում են նախադասության անջատման և մի քանի անուղղակի խնդիրներ ու պարագաներ։Պատասխանում է ո՞ւմից,ինչի՞ց,որտեղի՞ց,երբվանի՞ց հարցերին։Հոդ չի ստանում։Դասարանում կարելի է կատարել մի այսպիսի աշխատանք։

Գուշակել ասացվածքներում բաց թողած բառերը։Կարելի է աշակերտներին հուշումներով օգնել։

Խնձորը——————————— հեռու չի ընկնի։ /ծառից/
——————— վախեցողի ապրածն էլ մեռածի հաշիվ է։ /մահից/
Կրիան իր——————————— դուրս չի գա։ /պատյանից/
——————— մազ պոկելն էլ է խեր։ /շնից/
Ինքն իր ——————————— կվախենա։ /ստվերից/

Գործիական հոլովը կազմվում է **ով** կամ **բ** վերջավորություններով,նրանով արտահայտվում են միջոցի անուղղակի խնդիրը և այլ անուղղակի խնդիրներ ու պարագաներ։Հոդ չի ստանում։Պատասխանում է ումո՞վ, ինչո՞վ,որտեղո՞վ,ե՞րբ,որքա՞ն ժամանակով,ինչպե՞ս,ինչպիսի՞ հարցերին։Դասն ամրապնդելու համար կկատարենք խմբային աշխատանք,նախապես պատրաստած քարտերով։

Ներգոյական հոլովը կազմվում է ում վերջավորությամբ,նրանով արտահայտվում են տեղի և ժամանակի պարագաները։Պատասխանում է որտե՞ղ,ե՞րբ հարցերին։Հոդ չի ստանում։Անձ ցույց տվող բառերը ներգոյական հոլով չունեն։Նրանք ներգոյական հոլովի իմաստ արտահայտում են **սեռական հոլով+մեջ կապ** կաղապարով։Ամրապնդելու համար դասարանը կբաժանենք երկու խմբի,կհանձնարարենք կազմել հարցեր և ուղղել միմյանց։

Օրինակ՝

1/ Որտե՞ղ է ծնվել Եղիշե Չարենցը։ /Կարսում/

2/Որտե՞ղ է գտնվում Քեոփսի բուրգը։ /Եգիպտոսում/

3/ Որտե՞ղ է փակված Փոքր Մհերը։ /Ագռավաքարում/

Հոլովումների ուսուցումը պետք է ամփոփել գծապատկերով,իսկ գոյական անվան համար կազմել տալ մի ընդհանուր գծապատկեր։Այդ գծապատկերն օգտագործել ամփոփիչ դասին։

Բացի բանավոր հարցումներից կարելի է կատարել նաև գրավոր ստուգում ու ամփոփում քարտերի կամ գործնական աշխատանքի միջոցով։


Գոյական անուն
ԹԻՎ
ՏԵՍԱԿՆԵՐ
ԱՌՈՒՄ
ԵԶԱԿԻ
ՀՈԳՆԱԿԻ
ՈՐՈՇՅԱԼ
ԱՆՈՐՈՇ
ԱՆՁ
ԻՐ
ՀԱՏՈՒԿ
ՀԱՍԱՐԱԿ
ՀՈԼՈՎՆԵՐ
Ուղղական
Սեռական
Տրական
Հայցական
Բացառական
Գործիական
Ներգոյական
ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ
ՆԵՐՔԻՆ
ԱՐՏԱՔԻՆ
Ա
Ո
Ի
ՈՒ
ԱՆ
ՎԱ
ՈՁ
Ց

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, գոյականի շուրջը տարվող թե՛ մարզողական և թե՛ վերլուծական ու կիրառական վարժությունների ծանրության կենտրոնը պետք է տեղափոխել նրա բոլոր հատկանիշների մասին գաղափար տալուց հետո,որպեսզի այդ հատկանիշները վերցվեն որոշակի համակարգի մեջ (գոյական անուն,անձ կամ իր, հասարակ կամ հատուկ անուն, եզակի կամ հոգնակի թիվ,հոլով), որպեսզի գոյականը ճանաչելիս կարողանան թվել նրա բոլոր տարբերակիչ հատկանիշները: Պետք է հասնել այն բանին,որ երեխաները ոչ միայն որոշեն բառի ինչ խոսքի մաս լինելը,այլև կարողանան հիմնավորել իրենց ասածը կամ արածը, որպեսզի ստիպված լինեն գոյականի վերաբերյալ իրենց սովորածը գործադրել:

Գոյական անվան շուրջ տարվող մարզողական, վերլուծական ու կիրառական վարժությունները պետք է նպաստեն այդ խոսքի մասի ու նրա քերականական հատկանիշների վերաբերյալ հասկացության ճիշտ ձևավորմանը,սովորած գիտելիքները խոսքի մեջ գործնականորեն կիրառելու կարողության մշակմանը:

Ինչպես գիտենք, ժամանակը փոխում է գիտելիքներ ձեռք բերելու ուղիներն ու հնարավորությունները: Կարծում եմ, որ ժամանակակից ուսուցիչը պետք է որդեգրի կառուցողական մոտեցում և կիրառի դասավանդման նորարարական մեթոդներ: Դասարանում կատարվող աշխատանքին կարող են օժանդակել առկա ժամանակակից ՏՏ միջոցները և համակարգչային ծրագրերը:

Դասավանդման և ուսուցման նորարարական եղանակները վերափոխում են նաև դասարանում դաս անցկացնելու գործելակերպը: Ավելին ուսուցման ընթացքում սովորողները, հիմնական գիտելիքներից ու կարողություններից բացի, պետք է ունենան 21-րդ դարում պահանջվող բոլոր հմտությունները՝ համագործակցության, հաղորդակցման և տեղեկատվական կառավարման կարողություններ, ինչպես նաև նրանց պետք է հասանելի լինեն ուսմանն օժանդակող այն բոլոր միջոցները, որոնք հնարավոր են դարձնում այդ կարողությունների օգտագործումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ս. Վ. Գյուլբուդաղյան- «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա»
Ա.Ե. Տեր-Գրիգորյան- «Հայոց լեզվի մեթոդիկա»
Գ. Մկրտչյան, Թ. Թովմասյան «Հայոց լեզվի մեթոդական ձեռնարկ»